«ԿՈՆՎԵԿՏ» ՓԲԸ

2023թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2024

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն.....3

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ..... 6

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023Թ.

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 7

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023Թ.

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ..... 8

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ

ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ..... 9

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան, Գյուլբենկյան 30/3, գրասենյակ 129
Հեռախոս՝ +374 10 229021, +374 60 529021
Էլ. փոստ՝ office@anaudit.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԿՈՆՎԵԿՏ» ՓԲԸ միակ բաժնետիրոջը

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԿՈՆՎԵԿՏ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2023թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների ամփոփագիրը:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «ԿՈՆՎԵԿՏ» ՓԲԸ-ի առ 31 դեկտեմբերի 2023թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական հոսքերը՝ Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Այլ հանգամանք

«ԿՈՆՎԵԿՏ» ՓԲԸ-ի 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որն այդ հաշվետվությունների վերաբերյալ 2023թ. հուլիսի 31-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության գործադիր ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության

համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կա՛մ լուծարելու Ընկերությունը, կա՛մ դադարեցնելու դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Ընկերության միակ բաժնետերն է պատասխանատու Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու

կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Ընկերությունն այլևս չհամարվի անընդհատ գործող.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Ընկերության ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի պատասխանատու ղեկավարն է՝

Արթուր Հարությունյան

Տնօրեն, որակավորված աուդիտոր,
ՀԳԳՀ՝ 2 20 0017

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան
1 հուլիսի 2024թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ.

Հազար դրամ	*Ծանոթ.*	*31.12.2023թ.*	*31.12.2022թ.*
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	335,777	94,156
Ոչ նյութական ակտիվներ		271	304
Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով	7	39,472	41,456
Տրամադրված փոխառություններ	11	5,000	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***380,520***	***135,916***
Պաշարներ	8	725,093	692,894
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	9	98,049	-
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	10	1,055,195	1,061,418
Տրամադրված փոխառություններ	11	569,560	527,678
Դրամական միջոցներ	12	199,970	177,453
Այլ ընթացիկ ակտիվներ		100	124
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***2,647,967***	***2,459,567***
Ընդամենը ակտիվներ		***3,028,487***	***2,595,483***
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	13	136,922	52,672
Չբաշխված շահույթ	13	1,457,066	1,685,437
Ընդամենը սեփական կապիտալ		***1,593,988***	***1,738,109***
Հետաձգված հարկային պարտավորություններ	20	9,031	8,879
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		***9,031***	***8,879***
Փոխառություններ	14	832,859	3,967
Առևտրական կրեդիտորական պարտքեր	15	305,305	526,980
Վճարվելիք շահութահարկ		140,720	169,693
Վճարվելիք այլ հարկեր		93,479	97,715
Աշխատավարձի և այլ կարճ.հատուցումների գծով պարտավորություններ	16	50,460	48,626
Այլ ընթացիկ պարտավորություններ		2,645	1,514
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***1,425,468***	***848,495***
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		***3,028,487***	***2,595,483***

Տնօրեն Անդրանիկ Միրզոյան

Գլխավոր հաշվապահ Անահիտ Հարությունյան

1 հուլիսի 2024թ.

«ԿՈՆՎԵԿՏ»
«КОНВЕКТ»
02567479

10-29 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար դրամ	*Ծանոթ.*	*2023*	*2022*
Հասույթ	17	8,439,565	7,672,634
Վաճառքի ինքնարժեք	17	(5,099,812)	(5,477,086)
Համախառն շահույթ		**3,339,753**	**2,195,548**
Այլ եկամուտներ	18	27,722	274,603
Իրացման ծախսեր		(1,262,538)	(868,495)
Վարչական ծախսեր		(343,696)	(227,631)
Այլ ծախսեր	18	(90,916)	(50,568)
Գործառնական շահույթ		**1,670,325**	**1,323,457**
Ֆինանսական եկամուտներ	19	76,205	30,908
Ֆինանսական ծախսեր	19	(6,395)	(4,883)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ / (վնաս)		(5,376)	24,687
Շահույթ մինչև հարկումը		**1,734,759**	**1,374,169**
Շահութահարկի գծով ծախս	20	(278,124)	(247,705)
Զուտ շահույթ		**1,456,635**	**1,126,463**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**1,456,635**	**1,126,463**

Տնօրեն — Անդրանիկ Միրզոյան

Գլխավոր հաշվապահ — Անահիտ Հարությունյան

«ԿՈՆՎԵԿՏ»
«КОНВЕКТ»
02567479

1 հուլիսի 2024թ.

10-29 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար դրամ	*Ծանոթ.*	*Կանոնա-դրական կապիտալ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը*
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**13**	**25,109**	**1,110,221**	**1,135,330**
Զուտ շահույթ		-	1,126,463	1,126,463
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		-	*1,126,463*	*1,126,463*
Կանոնադրական կապիտալի համալրում		27,563	-	27,563
Շահաբաժիններ		-	(551,247)	(551,247)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.		**52,672**	**1,685,437**	**1,738,109**
Զուտ շահույթ		-	1,456,635	1,456,635
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		-	*1,456,635*	*1,456,635*
Կանոնադրական կապիտալի համալրում		84,250	-	84,250
Շահաբաժիններ		-	(1,685,006)	(1,685,006)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.		**136,922**	**1,457,066**	**1,593,988**

Տնօրեն Անդրանիկ Միրզոյան

Գլխավոր հաշվապահ Անահիտ Հարությունյան

1 հուլիսի 2024թ.

«ԿՈՆՎԵԿՏ»
«КОНВЕКТ»
02567479

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար դրամ	*2023*	*2022*
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
արտադրանքի, ապրանքների, ծառայությունների վաճառքից	10,151,362	9,279,053
այլ ներհոսքեր	1,109,468	435,328
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից	(7,972,033)	(6,796,804)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից	(1,118,027)	(655,936)
շահութահարկի վճարումից	(307,103)	(107,335)
այլ հարկերի, պարտադիր վճարների վճարումից	(724,541)	(682,262)
այլ արտահոսքեր	(48,738)	(47,419)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***1,090,388***	***1,424,625***
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
հիմնական միջոցների վաճառքից	800	300
տրված փոխառությունների մարումից	1,765,768	236,000
տոկոսների ստացումից	30,811	8,662
հիմնական միջոցների ձեռքբերումից	(319,001)	(84,390)
փոխառությունների տրամադրումից	(1,845,182)	(766,551)
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***(366,804)***	***(605,979)***
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
կանոնադրական կապիտալի համալրումից	84,250	27,563
վարկերի և փոխառությունների ստացումից	2,468,958	1,694,119
վարկերի և փոխառությունների մարումից	(1,639,738)	(1,852,614)
շահաբաժինների վճարումից	(1,600,750)	(523,688)
տոկոսների վճարումից	(5,400)	(1,608)
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***(692,680)***	***(656,228)***
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**30,904**	**162,418**
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(8,387)	(8,372)
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի	**177,453**	**23,407**
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի	**199,970**	**177,453**

Գլխավոր հաշվապահ

Անդրանիկ Միրզոյան

Անահիտ Հարությունյան

1 հուլիսի 2024թ.

10-29 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Նկարագիր և գործունեություն

«Կոնվեկտ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2003թ:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ներմուծված հրուշակեղենի վաճառքն է: Ընկերությունը հրուշակեղեն է ներմուծում ինչպես ԵՏՄ անդամ պետություններից, այնպես էլ երրորդ երկրներից:

Ընկերության գործունեության հասցեն է՝ ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Ծովակալ Իսակովի պող., 32/25 շենք, որտեղ տեղակայված է Ընկերության վարչական գրասենյակը:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2023թ. 173 անձ է, իսկ 2022թ.'168:

1.2. Կորպորատիվ կառուցվածք

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը՝ Անդրանիկ Միրզոյանը:

Բաժնետերեր	*Բաժնետոմսերի Քանակ*	*Անվանական արժեք ՀՀ դրամ*
Ընդամենը, այդ թվում	**20**	**136,921,500**
Արմինե Հովակիմյան	20	136,921,500

2. ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համապատասխան:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

4.1. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Սովորաբար սկզբնական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

4.2. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր), որի սկզբնական արժեքը հիմնական միջոցի ամբողջ արժեքում էական է, կամ ունի տնտեսական օգուտների սպառման նշանակալիորեն տարբեր մոդել, կամ ունի նշանակալիորեն տարբեր օգտակար ծառայություն, հաշվառվում է որպես առանձին միավոր:

Ընկերությունը հիմնական միջոցի միավորի սկզբնավորման արժեքը բաշխում է ըստ դրա հիմնական բաղադրիչների: Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները առանձնացնելուց հետո հիմնական միջոցի միավորի մնացած մասը ևս հաշվառվում է որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ (հիմնական միջոցի միավորի մնացորդային հիմնական բաղադրիչ): Որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ առանձին հաշվառվում է նաև հիմնական միջոցի միավորի անսարքությունների առկայության վերաբերյալ կանոնավոր լայնածավալ ստուգումների իրականացման ծախսումները (արժեքը), ինչպես նաև հիմնական միջոցի միավորի կանոնավոր լայնածավալ կապիտալ վերանորոգումների ծախսումները (արժեքը):

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Չափումը ճանաչման պահին. Հիմնական միջոցի միավորը ճանաչման պահին չափվում է իր սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է: Երբ վճարումը վճարման նորմալ պայմաններով նախատեսված ժամկետից հետաձգվում է, անհապաղ վճարման գնի համարժեքի և ընդհանուր վճարումների տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային ծախս՝ հետաձգված ժամկետի ընթացքում:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

Չափումը ճանաչումից հետո. Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածություն. Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

ա) Ընկերության կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը,

բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը,

գ) տեխնիկական հնացածությունը,

դ) հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Ընկերությունը հիմնական միջոցների խմբերի նկատմամբ կիրառում է հետևյալ օգտակար ծառայությունները. շենքեր՝ 20-40 տարի, կառուցվածքներ՝ 20-40 տարի, մեքենաներ և սարքավորումներ՝ 5-20 տարի, տրանսպորտային միջոցներ՝ 5-10 տարի, արտադրատնտեսական գույք, գործիքներ՝ 3-8 տարի, հաշվողական և համակարգչային տեխնիկա՝ 3-5 տարի, այլ հիմնական միջոցներ՝ 1-8 տարի:

Հողամասը ունի անսահմանափակ օգտակար ծառայություն, հետևաբար դրա համար մաշվածություն չի հաշվարկվում:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հետագա ծախսումները. Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են ճանաչման չափանիշները: Մասնավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է): Հիմնական միջոցների փոխարինվող մասերը ենթակա են ապաճանաչման: Ամենօրյա սպասարկման ծախսումները չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

Ապաճանաչում. Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապաճանաչվի, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

4.3. Ակտիվների արժեզրկում

Սույն ենթակետի դրույթները վերաբերում են հիմնական միջոցներին, ոչ նյութական ակտիվներին:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Ընկերությունը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Արժեզրկումից կորուստ. Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Արժեզրկումից կորստի ճանաչումից հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

Արժեզրկումից կորստի հակադարձում. Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Ակտիվի, բացառությամբ գուդվիլի, գծով արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչելուց հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

4.4. Պաշարներ

Սկզբնական չափում. Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և ոչ փոխհատուցելի հարկերը, ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Պաշարների ինքնարժեքի մեջ այլ ծախսումները ներառվում են միայն այն չափով, որ չափով դրանք կատարվել են՝ պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Պաշարների ինքնարժեքի մեջ չներառվող և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումների օրինակներ են՝

ա) գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերածախսի հետ.

բ) պահպանման ծախսումները, բացառությամբ եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը.

գ) վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ.

դ) վաճառքի ծախսումները:

Երբ պաշարները ձեռք են բերվում հետաձգված մարման ժամկետով, ապա վճարման նորմալ պայմաններում ձեռքբերման գնի և վճարված գումարի տարբերությունը, ճանաչվում է որպես տոկոսային ծախս ֆինանսավորման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում:

Ինքնարժեքի բանաձևեր. Փոխադարձ փոխարինելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ (առաջին մուտք առաջին ելք) արժեքով:

Հետագա չափում. Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման զուտ արժեքի մակարդակ՝ ըստ տեսակների հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար՝ մինչև իրացման զուտ արժեք, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը:

Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման զուտ արժեքի աճից, ճանաչվում են որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով: Ոչ իրացվելի են այն պաշարները, որոնք չեն իրացվել կամ օգտագործվել հաշվեկշռում հաշվառելուց 12 ամսվա ընթացքում և որոնք հավանական է, որ որևէ այլ ձևով չեն օգտագործվի՝ կապված դրանց բարոյական հնացման, որակի վատացման և այլ պատճառներով:

4.5. Հիմնական ֆինանսական գործիքներ

Քաղաքականության ընտրություն. Հիմնական ֆինանսական գործիքների նկատմամբ Ընկերությունը կիրառում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի 11-րդ և 12-րդ բաժինների պահանջներն ամբողջությամբ:

Հիմնական ֆինանսական գործքիներ են, մասնավորապես, առևտրական դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները, տրամադրված և ստացված փոխառությունները, վարկերը:

Սկզբնական ճանաչում. Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Սկզբնական չափում. Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, այն չափվում է գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, բացի այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական չափման, որոնք հետագայում չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով), բացառությամբ եթե համաձայնությունն, ըստ էության, իրենից ներկայացնում է ֆինանսավորման գործարք՝ կամ գործարքի կողմ հանդիսացող կազմակերպություններից մեկի մոտ առաջացնելով ֆինանսական պարտավորություն, կամ կոնտրագենտի մոտ՝ ֆինանսական ակտիվ: Համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի, եթե վճարումը հետաձգվում է ավելի, քան սովորական գործունեության համար ընդունված ժամկետները, օրինակ՝ ապրանքների իրացման նպատակով գնորդին տրամադրվում է հետաձգված անտոկոս վճարումների իրավունք (անտոկոս կրեդիտավորում) կամ ֆինանսավորվում է մի տոկոսադրույքով, որը շուկայական տոկոսադրույք չէ, օրինակ՝ աշխատողին տրամադրում է անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ: Եթե համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի, ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է ապագա վճարումների ներկա արժեքով՝ զեղչված համանման պարտքային գործիքի շուկայական տոկոսադրույքով, որը որոշվել էր սկզբնական ճանաչման պահին:

Հետագա չափում. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆինանսական գործիքները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ առանց հանելու գործառնության հետ կապված որևէ ծախսում, որը Ընկերությունը կարող է կրել վաճառքի կամ այլ օտարման դեպքում:

Որպես ընթացիկ ակտիվներ կամ ընթացիկ պարտավորություններ դասակարգված պարտքային գործիքները չափվում են դրամական միջոցների կամ այլ հատուցման չզեղչված գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի կամ կստացվի (այսինքն՝ արժեզրկումը հանած), բացառությամբ եթե համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի:

Ամորտիզացված արժեք և արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ. Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստորև նշվածների զուտ գումարն է՝

ա) գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին,

բ) հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ,

գ) գումարած կամ հանած սկզբնական ճանաչման գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով,

դ) հանած ֆինանսական ակտիվի արժեզրկման կամ անհավաքագրելիության գծով ցանկացած նվազեցում (ուղղակիորեն կամ կարգավորող հաշիվների օգտագործման միջոցով):

Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, երբ տեղին է, ավելի կարճ ժամանակաշրջանի համար, գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրտորեն զեղչում է մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը որոշվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահի դրությամբ հաշվեկշռային արժեքի հիման վրա: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի համաձայն՝

ա) ֆինանսական ակտիվի (պարտավորության) ամորտիզացված արժեքը ապագա դրամական մուտքերի (վճարումների) ներկա արժեքն է՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով.

բ) ժամանակաշրջանի տոկոսային ծախսը (եկամուտը) հավասար է ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական պարտավորության (ակտիվի) հաշվեկշռային արժեքի և ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքի արտադրյալին:

Ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական գործիքների արժեզրկում. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք առկա է ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված որևէ ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն: Եթե առկա է արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն, Ընկերությունը անմիջապես ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի արժեզրկված լինելու անկողմնակալ վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողի ուշադրությանն արժանացած դիտարկելի տվյալները՝ հետևյալ կորստի դեպքերի վերաբերյալ՝

ա) թողարկողի կամ փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները.

բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը.

գ) պարտապանի ֆինանսական դժվարությունների հետ կապված՝ տնտեսական կամ իրավական պատճառներով, պարտատիրոջ կողմից պարտապանին զիջումների տրամադրումը, որը այլապես պարտատերը չէր նախատեսի.

դ) հավանական է դարձել, որ պարտապանը կսնանկանա կամ կենթարկվի այլ ֆինանսական վերակազմավորման.

ե) դիտարկելի տվյալներ, որոնք վկայում են, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով, դրանց սկզբնական ճանաչումից հետո, առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշակիացնել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով:

Չափում. Ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստը ակտիվի հաշվեկշռային արժեքի և ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված՝ գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև եղած տարբերությունն է: Եթե այդպիսի ֆինանսական գործիքն ունի փոփոխուն տոկոսադրույք, արժեզրկումից կորուստը չափելու նպատակով զեղչման դրույքը պայմանագրի համաձայն որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է:

Եթե հետագա որևէ ժամանակաշրջանում արժեզրկումից կորստի գումարը նվազում է, և նվազումը կարող է օբյեկտիվորեն կապված լինել արժեզրկումը ճանաչելուց հետո տեղի ունեցած որևէ դեպքի հետ, ապա Ընկերությունը հակադարձում է նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը կամ ուղղակիորեն, կամ կարգավորող հաշիվը ճշգրտելու միջոցով: Հակադարձումը չպետք է հանգեցնի այն բանին, որ ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը (բոլոր կարգավորող հաշիվները հանած) գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կլիներ, եթե նախկինում արժեզրկումը ճանաչված չլիներ: Հակադարձման գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում. Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ

պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարգևատրումները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում. Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ Ընկերությունը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

Առևտրական դեբիտորական պարտքեր. Հիմնական վաճառքները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքով, և դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն: Երբ պարտքը հետաձգվում է վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները վերլուծվում են՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ գումարները փոխհատուցելի չեն: Եթե գումարները փոխհատուցելի չեն, արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Արտարժույթով արտահայտված առևտրական դեբիտորական պարտքերը վերահաշվարկվում են դրամով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Արտարժույթի փոխարժեքային օգուտները կամ վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Տրված փոխառություններ. Տրված փոխառությունները ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ են:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով տրված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (վնասը) ճանաչվում է

- սեփական կապիտալում, եթե ֆինանսական ակտիվը բաժնետերերի ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական ակտիվը այլ կողմերի գծով է:

Առևտրական կրեդիտորական պարտքեր. Սկզբնական ճանաչման պահին առևտրական կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքի, երբ կրեդիտորական պարտքը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Ստացված վարկեր և փոխառություններ. Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով ստացված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (օգուտը) ճանաչվում է

- որպես սեփական կապիտալի այլ տարր, եթե ֆինանսական պարտավորությունը բաժնետերերի ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական պարտավորությունը այլ կողմերի գծով է:

Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հաշվանցում. Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են զուտ գումարով այն դեպքում, երբ Ընկերությունը՝

ա) տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և

բ) մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

4.6. Բաժնային գործիքներ

Ընկերության կողմից թողարկված պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են կա'մ որպես ֆինանսական պարտավորություններ, կա'մ էլ որպես սեփական կապիտալ՝ պայմանագրային համաձայնության բովանդակությանը և ֆինանսական պարտավորության ու բաժնային գործիքի սահմանումներին համապատասխան:

Ընկերության կողմից թողարկված բաժնային գործիքները ճանաչվում են ստացված մուտքերի հիման վրա՝ հանած թողարկմանը ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Ընկերության սեփական բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ որպես վերջինիս նվազեցում: Ընկերության սեփական բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ մարման գծով շահույթում կամ վնասում որևէ օգուտ կամ կորուստ չի ճանաչվում:

4.7. Վարձակալություն. Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը որպես վարձակալ

Սկզբնական ճանաչում. Վարձակալության ժամկետի մեկնարկի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալը ֆինանսական վարձակալության շրջանակներում իր օգտագործման իրավունքները և պարտականությունները ճանաչում է որպես ակտիվ և պարտավորություն՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է, ընդ որում՝ դրանք որոշվում են վարձակալության սկզբի դրությամբ: Վարձակալի ցանկացած սկզբնավորման ուղղակի ծախսում (լրացուցիչ ծախսումներ, որոնք ուղղակիորեն վերագրելի են վարձակալության շուրջ բանակցություններին և համաձայնության ձեռքբերմանը) ավելացվում է որպես ակտիվ ճանաչված գումարին:

Նվազագույն վարձավճարների ներկա արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը: Եթե այն հնարավոր չէ որոշել, ապա պետք է կիրառվի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափում. Նվազագույն վարձավճարները բաշխվում են ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական վճարը վարձակալության ժամկետի ընթացքում բաշխվում է ըստ ժամանակաշրջանների այնպես, որպեսզի ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ:

Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք կատարվում են:

Ֆինանսական վարձակալությամբ վարձակալված ակտիվի համար հաշվարկվում է մաշվածություն (ամորտիզացիա)՝ համաձայն այդ տեսակի ակտիվի համար սահմանված քաղաքականության: Եթե խելամտորեն որոշակի չէ, որ Ընկերությունը վարձակալության ժամկետի ավարտին ձեռք է բերելու սեփականության իրավունքը, ապա ակտիվն ամբողջովին ամորտիզացվում է վարձակալության ժամկետից կամ օգտակար ծառայության ժամկետից առավել կարճի ընթացքում: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է՝ արդյոք ֆինանսական վարձակալությամբ վարձակալված ակտիվը արժեզրկվել է:

Գործառնական վարձակալություն. Որպես վարձակալ, Ընկերությունը գործառնական վարձակալության գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է որպես ծախս կամ ծախսում գծային հիմունքով, եթե մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ չի ներկայացնում ակտիվի օգտագործումից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը:

Ընկերությունը որպես վարձատու

Վարձակալության տրված ակտիվները (բացառությամբ ֆինանսական վարձակալության դեպքերի) շարունակվում են ճանաչվել Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և դրանց գծով սովորականի նման շարունակում է հաշվարկվել մաշվածություն:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես եկամուտ վարձակալության ժամկետում (այլ եկամուտների կազմում), բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը: Պայմանական վարձավճարները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

4.8. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿՆ-ների ՖՀՄՍ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

4.9. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Ճանաչում. Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Չափում. Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքը (կամ դրույքները) պետք է լինի այն դրույքը (կամ դրույքները)՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

4.10. Հասույթ

Գործարքներ. Հասույթ առաջանում են հետևյալ գործարքներից՝

ա) արտադրանքի, ապրանքների վաճառք.

բ) ծառայությունների մատուցում.

գ) այլ անձանց կողմից Ընկերության ակտիվների օգտագործում, որը բերում է տոկոսներ և վարձակալական եկամուտ:

Չափում. Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները: Հասույթում չի ներառվում երրորդ անձանց անունից հավաքագրված գումարները (օրինակ՝ ԱԱՀ):

Հետաձգված վճարում. Երբ դրամական միջոցների (դրամական միջոցների համարժեքների) ստացումը հետաձգվում է, և համաձայնության արդյունքում գործարքը վերածվում է ֆինանսավորման գործարքի, հատուցման իրական արժեքը բոլոր ապագա ստացումների ներկա արժեքն է՝ որոշված պայմանական տոկոսադրույքի կիրառմամբ:

Պայմանական տոկոսադրույքը ստորև նշվածներից առավել հստակորեն որոշելին է՝

ա) նման վարկունակություն ունեցող թողարկողի նմանատիպ ֆինանսական գործիքի համար գերակշռող տոկոսադրույք, կամ

բ) տոկոսադրույք, որը զեղչում է ֆինանսական գործիքի անվանական գումարը՝ այն հասցնելով ապրանքների կամ ծառայությունների ընթացիկ վաճառքի գնին:

Ապագա բոլոր վճարումների ներկա արժեքի և հատուցման անվանական գումարի տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային հասույթ:

Ապրանքների վաճառք. Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ՝

ա) Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Ընկերությունը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ապրանքների (արտադրանքի) վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ ապրանքները առաքվում են և սեփականության իրավունքը փոխանցվում է:

Ծառայությունների մատուցում. Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Պայմանագրի աշխատանքների ավարտվածության աստիճանը որոշվում է պայմանագրի աշխատանքների ուսումնասիրությամբ:

Տոկոս. Տոկոսները ճանաչվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.11. Փոխառության ծախսումներ

Ճանաչում. Փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են:

4.12. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը << դրամն է:

Սկզբնական ճանաչում. Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ տեղեկատվության ներկայացում. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչում. Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

<< կենտրոնական բանկի հրապարակած միջին շուկայական փոխարժեքը 31.12.2022թ. դրությամբ՝ 1 Եվրո- 447.90 դրամ (31.12.2022թ – 420.06 դրամ), 1 ԱՄՆ դոլար- 404.79 դրամ (31.12.2022թ – 393.57 դրամ), 1 Ռուսական ռուբլի- 4.5 դրամ (31.12.2021թ.- 5.59 դրամ):

4.13. Շահութահարկ

Ընթացիկ հարկ. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ. Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Եկամուտ կամ ծախս ներկայացում. Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընկերությունը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Հաշվանցում. Ընկերությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

I. նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

II. տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

5. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

Անընդհատության հիմունք. Ղեկավարությունը պատրաստել է սույն ֆինանսական հաշվետվությունները անընդհատության հիմունքի հիման վրա: Ղեկավարության այս դատողությունները հիմնված են Ընկերության ֆինանսական վիճակի, ընթացիկ պլանների, շահութաբերության և ֆինանսական ռեսուրսների մատչելիության, ինչպես նաև Ընկերության ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական վերջին փոփոխությունների ազդեցության վերլուծության հիման վրա:

Օգտակար ծառայություն (ծանոթ. 6). Ակտիվների օգտակար ծառայությունը գնահատվել է՝ հաշվի առնելով ենթադրվող օգտագործելիությունը: Օգտակար ծառայության մեծ ժամկետը, ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական փոփոխությունները, շուկայի փոփոխությունները կարող են ազդեցություն թողնել գնահատումների վրա:

6. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	*Մեքենաներ և սարքավորումներ*	*Տրանսպորտային միջոցներ*	*Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ*	*Այլ հիմնական միջոցներ*	*Ընդամենը*
Արժեք					
31 դեկտեմբերի 2021թ.	**12,511**	**331,755**	**15,667**	**10,157**	**370,090**
Ձեռք բերում	4,294	50,799	1,608	3,514	**60,215**
Դուրսգրում	-	(2,627)	-	-	**(2,627)**
31 դեկտեմբերի 2022թ.	**16,805**	**379,927**	**17,275**	**13,671**	**427,678**
Ձեռք բերում	10,247	272,303	2,351	8,208	**293,109**
Դուրսգրում	(4,705)	(10,867)	-	(35)	**(15,607)**
31 դեկտեմբերի 2023թ.	**22,347**	**641,363**	**19,626**	**21,844**	**705,180**
Մաշվածություն					
31 դեկտեմբերի 2021թ.	**12,224**	**284,950**	**11,455**	**2,042**	**310,671**
Տարեկան մաշվածություն	2,880	19,700	1,069	1,303	**24,952**
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	(2,101)	-	-	**(2,101)**
31 դեկտեմբերի 2022թ.	**15,104**	**302,549**	**12,524**	**3,345**	**333,522**
Տարեկան մաշվածություն	5,204	38,646	1,225	2,162	**47,237**
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	(4,705)	(6,616)	-	(35)	**(11,356)**
31 դեկտեմբերի 2023թ.	**15,603**	**334,579**	**13,749**	**5,472**	**369,403**
Հաշվեկշռային արժեք					
31 դեկտեմբերի 2021թ.	**287**	**46,805**	**4,212**	**8,115**	**59,419**
31 դեկտեմբերի 2022թ.	**1,701**	**77,378**	**4,751**	**10,326**	**94,156**
31 դեկտեմբերի 2023թ.	**6,744**	**306,784**	**5,877**	**16,372**	**335,777**

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ չեն եղել: Ժամանակավոր պարապուրդի մեջ գտնվող հիմնական միջոցներ չկան: Դեռևս օգտագործման մեջ գտնվող, սակայն լրիվ մաշված հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը 31.12.2023թ.-ին կազմում է 264,468 հազար դրամ (31.12.2022թ.-ին՝ 211,196 հազար դրամ):

Մաշվածություն

Հազար դրամ	*2023*	*2022*
Ընդամենը, այդ թվում՝	**47,237**	**24,952**
• իրացման նշանակության	20,934	20,116
• վարչական նշանակության	26,303	4,836

7. Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով

հազար դրամ	*Վարձակալված տարածքի վրա կապիտալ ծախսումներ*	*Ընդամենը*
Արժեք		
31 դեկտեմբերի 2021թ.	**87,815**	**87,815**
Կատարված ծախսումներ	42	42
Դուրսգրում	-	-
31 դեկտեմբերի 2022թ.	**87,857**	**87,857**
Կատարված ծախսումներ	4,370	4,370
Դուրսգրում	-	-
31 դեկտեմբերի 2023թ.	**92,227**	**92,227**
Մաշվածություն		
31 դեկտեմբերի 2021թ.	**40,165**	**40,165**
Մաշվածություն	6,236	6,236
Դուրսգրում	-	-
31 դեկտեմբերի 2022թ.	**46,401**	**46,401**
Մաշվածություն	6,354	6,354
Դուրսգրում	-	-
31 դեկտեմբերի 2023թ.	**52,755**	**52,755**
Հաշվեկշռային արժեք		
31 դեկտեմբերի 2021թ.	**47,650**	**47,650**
31 դեկտեմբերի 2022թ.	**41,456**	**41,456**
31 դեկտեմբերի 2023թ.	**39,472**	**39,472**

8. Պաշարներ

Հազար դրամ	*31.12.2023թ.*	*31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**725,093**	**692,894**
• ապրանքներ	722,753	690,208
• վառելանյութ	2,340	2,686

2023թ. որպես ծախս ճանաչված ապրանքների հաշվեկշռային արժեքը կազմել է 5,099,812 հազար դրամ (2022թ.-ին՝ 5,477,086 հազար դրամ), իսկ նյութերի արժեքը կազմել է 187,002 հազար դրամ (2022թ.-ին՝ 218,950 հազար դրամ):

Գրավադրումներ. 1 մլրդ դրամ սահմանաչափով օվերդրաֆթի ապահովում են հանդիսացել Երևանում և Տավուշի մարզում գտնվող խմբի ընկերություններին պատկանող 2,400,000 հազար դրամ արժողությամբ շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավը:

9. Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար

Հազար դրամ	*31.12.2023թ.*	*31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**98,049**	-
• ծառայությունների ձեռքբերման համար, որից՝	21,546	-
կապակցված կողմերի գծով	*16,027*	-
• ապրանքներ ձեռք բերելու համար	25,706	-
• այլ նպատակներով տրված	50,797	-

10. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	*31.12.2023թ.*	*31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**1,055,195**	**1,061,418**
• ապրանքների վաճառքից, որից՝	976,788	1,026,752
կապակցված կողմերի գծով	*243*	*197*
• վարձակալությունից	1,839	3,759
կապակցված կողմերի գծով	*1,839*	*2,966*
• փոխառության տոկոսներից	76,568	30,907
կապակցված կողմերի գծով	*76,568*	*30,868*

11. Տրամադրված փոխառություններ

Հազար դրամ	*31.12.2023թ.*	*31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**574,560**	**527,678**
Կապակցված կողմին տրամադրված երկարաժամկետ փոխառություն ՝ դրամով, 9.5%-ով	5,000	-
Կապակցված կողմին տրամադրված կարճաժամկետ փոխառություն ՝ դրամով, 9.5%-ով	569,560	496,674
Կապակցված կողմին տրամադրված կարճաժամկետ փոխառություն ՝ ռուբլիով, անտոկոս	-	31,004

12. Դրամական միջոցներ

	31.12.2023թ.	*31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**199,970**	**177,453**
• դրամարկղում	2,461	1,743
• բանկում << դրամով	54,654	16,709
• բանկում արտարժույթով	142,855	159,001

13. Սեփական կապիտալ

Սեփական կապիտալը (զուտ ակտիվները) ձևավորված է կանոնադրական կապիտալից (թողարկված և տեղաբաշխված (վճարված) կապիտալ), չբաշխված շահույթից (վնասից)՝ ներառյալ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթը (վնասը):

Կանոնադրական կապիտալ. Կանոնադրական կապիտալը կազմվել է բաժնետիրոջ ձեռք բերած հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից: Յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Տարեսկզբին կանոնադրական կապիտալը կազմել է 52,672 հազար << դրամ: Հաշվետու տարում տեղի է ունեցել կանոնադրական կապիտալի համալրում և Ընկերության կանոնադրական կապիտալը դարձել է 136,921,500 (մեկ հարյուր երեսունվեց միլիոն ինը հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր) << դրամ, որը կազմում է 20 հատ սովորական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 6,846,075 դրամ: Կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և վճարված:

Չբաշխված շահույթ. Ընկերության 2023թ. տարվա զուտ շահույթը կազմում է 1,456,635 հազար դրամ, իսկ 31.12.2023թ. դրությամբ չբաշխված շահույթը՝ 1,457,066 հազար դրամ: Հաշվետու տարում բաշխվել է 1,685,006 հազար դրամ շահաբաժին: Ընկերության ընթացիկ ակտիվները 31.12.2023թ. դրությամբ գերազանցել են ընթացիկ պարտավորությունները 1,222,499 հազար դրամ գումարով:

14. Փոխառություններ

Հազար դրամ	*31.12.2023թ*	*31.12.2022թ*
Ընդամենը, այդ թվում՝	**832,859**	**3,967**
• կարճաժամկետ փոխառություններ, որից	832,859	3,967
կապակցված կողմերի գծով	*832,859*	*3,967*

Հազար դրամ	*Տոկոսադրույք*	*Մարման ժամկետ*	*31/12/2023թ. Հաշվեկշռային արժեք*	*31/12/2022թ. Հաշվեկշռային արժեք*
Կարճաժամկետ փոխառություններ դրամով	անտոկոս	ցպահանջ	754,859	3,967
Կարճաժամկետ փոխառություններ դրամով	9,5%	*31/12/2024թ.*	78,000	-

Տարեվերջի դրությամբ չմարված փոխառությունների գումարը կազմում է 832,859 հազար դրամ: Փոխառությունները գրավով ապահովված չեն: Փոխառությունները ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ են:

Ընկերությունը անտոկոս փոխառությունների ստացման և մարման բազմաթիվ գործարքներ է կատարել ընկերության նկատմամբ վերահսկողություն ունեցող անձանց կողմից: Գործարքների հիմնական նպատակը հիմնադիրների կողմից վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններում դրամական միջոցների հոսքերի և մնացորդների օպտիմալ կառավարումն է: Շատ դեպքերում, ելնելով ընթացիկ իրավիճակի անհրաժեշտությունից, այս փոխառությունների ստացման և մարման ժամկետներն ու գումարները էականորեն տարբերվում են պայմանագրերով սկզբնապես նախատեսված գումարներից և ժամկետներից: Փաստացիորեն ընկերությունը չի վերահսկում փոխառությունների ստացման և մարման ժամկետներն ու գումարները, և հաշվետու ամսաթվին հաջորդող տասներկու ամիսների ընթացքում հնարավոր է կատարի փոխառությունների չպլանավորված մարումներ՝ ելնելով բիզնեսի գործառնական անհրաժեշտությունից:

15. Առևտրական կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	*31.12.2023թ.*	*31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**305,305**	**526,980**
• ապրանքների ձեռքբերումից	265,908	496,370
• ծառայությունների ձեռքբերումից, որից՝	39,397	30,262
կապակցված կողմերի գծով	*1,015*	*1,209*
• հիմնական միջոցների ձեռքբերումից	-	348

Առևտրական կրեդիտորական պարտքերը տոկոսային չեն և, որպես կանոն, մարվում են 30 օրվա ընթացքում:

16. Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություններ

Հազար դրամ	*31.12.2023թ.*	*31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**50,460**	**48,626**
• աշխատավարձի գծով	24,168	33,654
• կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով	26,292	14,972

17. Վաճառքներ

Հասույթի ուղղություններ

Ընկերությունը հասույթը ստացել է գնորդների հետ պայմանագրերից: Դրանք հիմնականում առաջացել են ապրանքների (հրուշակեղենի) վաճառքից:

Հազար դրամ	*2023թ.*			*2022թ.*		
	Հասույթ	*Ինքնարժեք*	*Համախառն շահույթ*	*Հասույթ*	*Ինքնարժեք*	*Համախառն շահույթ*
Ընդամենը, այդ թվում՝	**8,439,565**	**(5,099,812)**	**3,339,753**	**7,672,634**	**(5,477,086)**	**2,195,548**
• ապրանքների վաճառքից	8,439,565	(5,099,812)	3,339,753	7,672,634	(5,477,086)	2,195,548

Հասույթի մանրամասնեցում

Ապրանքի (ծառայության) տեսակ	*Տարածաշրջան*	*Գնորդի տեսակ*	*Պայմանագրի տեսակ*	*Պայմանագրի տևողություն*	*Ապրանքի (ծառայության) փոխանցման ժամկետ*	*Հասույթ*
Ապրանքի (հրուշակեղեն) մեծածախ վաճառք	<<	Ոչ պետական հատվածի գնորդ	փոփոխուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի պահին գնորդին հանձնված ապրանքներ	8,312,219
Ապրանքի (հրուշակեղեն) մանրածախ վաճառք	<<	Ոչ պետական հատվածի գնորդ	փոփոխուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի պահին գնորդին հանձնված ապրանքներ	44,475
Ապրանքի (հրուշակեղեն) արտահանում	Արտերկիր	Ոչ պետական հատվածի գնորդ	փոփոխուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի պահին գնորդին հանձնված ապրանքներ	74,576
Աշխատանքների կատարում	<<	Ոչ պետական հատվածի գնորդ	Հաստատուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի պահին գնորդին հանձնված աշխատանքներ	8,295

Պայմանագրի գծով մնացորդներ

Հազար դրամ	*2023*	*2022*
• պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	976,788	1,026,752

18. Այլ եկամուտներ (ծախսեր)

Հազար դրամ	*2023*	*2022*
Այլ եկամուտներ (օգուտներ) ընդամենը, այդ թվում՝	**27,722**	**274,603**
• տոկոսային եկամուտ	-	2,085
• գործառնական վարձակալությունից	15,527	15,896
• արտարժույթի փոխարկումից	1,123	22,913
• վնասի փոխհատուցումից	1,997	972
• այլ եկամուտներ (արտարժույթի փոփոխության վնասի փոխհատուցումից, պարտքի ներումից)	8,408	232,487
• հիմնական միջոցների վաճառքից	667	250

Հազար դրամ	*2023*	*2022*
Այլ ծախսեր (կորուստներ) ընդամենը, այդ թվում՝	**(90,916)**	**(50,568)**
• արժեքների պակասորդ և փչացումից կորուստներ	(47,299)	(16,419)
• արտարժույթի փոխարկումից	(37,905)	(33,510)
• պարտքի դուրսգրումից	(25)	(9)

• տոկոսներից, տուգանքներից	(971)	(85)
• երաշխիքային սպասարկման և այլ ծախսեր	(465)	(20)
• հիմնական միջոցների վաճառքից	(4,251)	(525)

19. Ֆինանսական եկամուտներ (ծախսեր)

Հազար դրամ	*2023*	*2022*
Ֆինանսական եկամուտներ ընդամենը, այդ թվում՝	**76,205**	**30,908**
• փոխառությունների տոկոսներ	76,205	30,908

Հազար դրամ	*2023*	*2022*
Ֆինանսական ծախսեր ընդամենը, այդ թվում՝	**(6,395)**	**(4,883)**
• վարկերի տոկոսներ	(5,400)	(3,694)
• փոխառությունների տոկոսներ	(995)	(1,189)

20. Շահութահարկ

Շահութահարկի դրույքաչափը 2023թ. 18% է (2022թ.-ին՝ 18%):

Հազար դրամ	*2023*	*2022*
• **շահույթ (վնասում) ճանաչված շահութահարկի գումար**, այդ թվում՝	**(278,124)**	**(247,705)**
○ ընթացիկ հարկի գծով	(277,972)	(246,234)
○ հետաձգված հարկի գծով	(152)	(1,471)
• **ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված շահութահարկի գումար**	-	-

Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում

Հազար դրամ

Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում	*2023*	*2022*
Հարկի կիրառվող դրույք	18%	18%
Շահույթը մինչև հարկումը	1,734,759	1,374,169
Չնվազեցվող ծախսեր/չհարկվող եկամուտներ	(190,470)	(6,202)
Հարկվող շահույթը	1,544,289	1,367,967
Ընթացիկ հարկ	(277,972)	(246,234)
Հարկի գործող միջին դրույքը	16,0%	17,9%

Ընթացիկ հարկի գծով սեփական կապիտալին դեբետագրված կամ կրեդիտագրված հոդվածներ չկան:
Չկան հարկի գծով ծախս (փոխհատուցում), որը վերաբերում է հաշվետու տարում ճանաչված արտասովոր հոդվածներին:

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հազար դրամ	*Ծանոթ.*	*Հարկվող (նվազեցվող) ժամանակավոր տարբերություններ*	
		2023	2022
Հիմնական միջոցներ	6	76,462	64,300
Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն	16	(26,292)	(14,972)
Ընդամենը՝ զուտ		**50,170**	**49,328**
Հարկի դրույքը		**18%**	**18%**
Հետաձգված հարկային պարտավորություն		**9,031**	**8,879**

«Հիմնական միջոցներ» հոդվածում հարկվող ժամանակավոր տարբերությունը առաջացել է հիմնական միջոցի միավորի՝ ֆինանսական ու հարկային հաշվառման նպատակներով տարբեր օգտակար ծառայության ժամկետների կիրառումից:

«Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն» հոդվածում ժամանակավոր տարբերությունը առաջացել է աշխատակիցների կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով:

Չկան որևէ նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություններ, չօգտագործված հարկային վնասներ և չօգտագործված հարկային զեղչեր, որոնց համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չի ճանաչվել որևէ հետաձգված հարկային ակտիվ:

21. Շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ

Հազար դրամ	*Ծանոթ.*	*2023*	*2022*
Հասույթ	17	8,439,565	7,672,634
Այլ եկամուտներ	18	27,722	274,603
Վաճառված ապրանքների ինքնարժեք	17	(5,099,812)	(5,477,086)
Օգտագործված հումք և նյութեր		(187,002)	(218,950)
Աշխատավարձ և կարճ. այլ հատուցումներ		(1,092,794)	(686,031)
ՀՄ-ների մաշվածություն		(47,237)	(24,952)
ՈՆԱ-ների ամորտիզացիա		(33)	(94)
Գործառնական այլ ծախսեր		(370,084)	(216,667)
Գործառնական շահույթ		**1,670,325**	**1,323,457**
Ֆինանսական եկամուտներ	19	76,205	30,908
Ֆինանսական ծախսեր	19	(6,395)	(4,883)
Փոխարժեքային տարբերությունից (վնաս) / օգուտ		(5,376)	24,687
Շահույթ մինչև հարկումը		**1,734,759**	**1,374,169**
Շահութահարկի գծով ծախս	20	(278,124)	(247,705)
Զուտ շահույթ		**1,456,635**	**1,126,463**

22. Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման հիմնական նպատակն է սեփական կապիտալի վարկունակության կայունության և ֆինանսական ցուցանիշների համապատասխան մակարդակի պահպանումն է՝ Ընկերության գործունեության աջակցության և բաժնետիրոջ շահույթը մաքսիմալացնելու նպատակով:

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին համապատասխան:

Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն

Հազար դրամ	2023	2022
Ընդամենը պարտավորություններ	1,434,499	857,374
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	199,970	177,453
Ընդամենը զուտ պարտք	**1,234,529**	**679,921**
Ընդամենը սեփական կապիտալ	**1,593,988**	**1,738,109**
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն	**0.8**	**0.4**

23. Կապակցված կողմերի բացահայտումներ

Վերահսկողության փոխհարաբերություն

Ընկերությունը մայր ընկերություն չունի: Ընկերության բաժնետերը թվով 1 ֆիզիկական անձ է (Ծանոթ. 1):

Անվանումը	Բնույթը
Բաժնետեր	Արմինե Հովակիմյան՝ միակ բաժնետեր (100%)

Տերեվերջի դրությամբ միակ բաժնետիրոջ կողմից Ընկերությանը տրամադրված անտոկոս և ցպահանջ փոխառության մնացորդը կազմել է 754,589 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,967 հազար դրամ):

Հաշվետու տարում Ընկերության միակ բաժնետիրոջը բաշխվել է 1,685,006 հազար դրամ շահաբաժին՝ նախորդ հաշվետու տարվա կուտակված շահույթից:

Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	Տրված փոխառություններ	Ստացված փոխառություններ	Առևտրական կրեդիտորական պարտքեր
Ծանոթ.	*9*	*10*	*11*	*14*	*15*
Մնացորդ 31.12.2022թ.	**-**	**34,030**	**527,678**	**-**	**1,209**
Ավելացում	36,780	97,050	1,845,552	78,000	5,868
Նվազեցում	(20,753)	(52,430)	(1,798,670)	-	(6,063)
Մնացորդ 31.12.2023թ.	**16,027**	**78,650**	**574,560**	**78,000**	**1,015**

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ. Առանցքային կառավարչական անձնակազմին կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2023թ. կազմել է 30,546 հազար դրամ և 2022թ.՝ 25,117 հազար դրամ: Առանքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

24. Պայմանականություններ

Բիզնես միջավայր. Հայաստանի Հանրապետությունը գտնվում է քաղաքական և տնտեսական փոփոխությունների փուլում: Չկան բիզնեսի և վերահսկողական այնպիսի զարգացած ենթակառուցվածքներ, ինչպիսիք կան ավելի հասուն շուկայական տնտեսություններում: Ավելին, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեությունը և վերջիններս ոչ միշտ են ճիշտ արտացոլում ֆինանսական գործիքների արժեքը: Հետագա տնտեսական աճի հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է և տարածաշրջանային անկայունությունը: Աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ, ինչն ազդում է համընդհանուր գնողունակության և պահանջարկի վրա:

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա բիզնես միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատումը: Բիզնես միջավայրի ապագա փոփոխությունները կարող են տարբերվել Ղեկավարության գնահատումներից:

Ապահովագրություն. ՀՀ-ում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում: Ներմուծվում են զարգացած երկրներում վաղուց կիրառելի ապահովագրական գործիքներ:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ Ընկերությունը իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ):
Քանի դեռ չի իրականացված ակտիվների ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

Դատական հայցեր. 2023թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չկան:

Հարկերի հաշվառման անորոշություններ և պայմանականություններ. ՀՀ հարկային համակարգը, հարկային հարաբերությունները կարգավորվում է հիմնականում ՀՀ հարկային օրենսգրքով: Օրենսդրությունում փոփոխությունները, պաշտոնական պարզաբանումները կամ իրազեկումները, դատական մարմինների որոշումները, օրենսդրության տարընթերցումները, տարաբնույթ մեկնաբանությունները առաջացնում են հարկային պարտավորությունների գնահատման անորոշություններ: Ներկայացված և վճարված հարկային

պարտավորությունների ճշտությունը ենթակա է ստուգման հարկային մարմինների կողմից, որոնք խախտումների համար իրավասու են առաջադրել տույժեր, տուգանքներ: Հարկային պարտավորությունները չեն կարող փոփոխվել, եթե դրանք վերաբերում են երեք տարուց ավել վաղեմությանը:

Ղեկավարությունը որոշում է, թե արդյոք հարկավոր է դիտարկել յուրաքանչյուր հարկային անորոշությունն առանձին կամ մեկ և ավելի հարկային անորոշությունների հետ միասին՝ կախված նրանից, թե որ մոտեցումն է թույլ տալիս լավագույնս կանխատեսել անորոշության լուծումը: Ղեկավարությունը ենթադրում է, որ հարկային մարմինը կստուգի այն գումարները, որոնք նա իրավունք ունի ստուգելու և այդ ստուգումները կատարելիս՝ կունենա համապատասխան տեղեկություններին վերաբերող ամբողջական տեղեկատվություն:

Ղեկավարությունը գտնում է, որ ճիշտ է ճանաչել հարկային պարտավորությունները: Այնուամենայնիվ, հարկային մարմինը կարող է ունենալ Ընկերության կողմից հաշվարկված և ներկայացված հարկային պարտավորությունների վերաբերյալ այլ մեկնաբանություններ, որոնք կարող են ի հայտ գալ ստուգումների, ուսումնասիրությունների ընթացքում:

25. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից (31.12.2023թ.) հետո մինչև վավերացման ամսաթիվը (01.07.2024թ.) ընկած ժամակահատվածում:

26. Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են հրապարակման համար 2024թ. հուլիսի 1-ին՝ տնօրեն Անդրանիկ Միրզոյանի և գլխավոր հաշվապահ Անահիտ Հարությունյանի կողմից:

Տնօրեն Անդրանիկ Միրզոյան

Գլխավոր հաշվապահ Անահիտ Հարությունյան

«ԿՈՆՎԵԿՏ» ՓԲԸ
02567479

Հուլիսի 1, 2024թ.